

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ






2009 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ)

Խորհրդի հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:





Բանկի Խորհրդի անդամներ.

<u>Բարսեղ Բեգլարյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի նախագահ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>11.08.09թ.</u> (ամսաթիվ)
<u>Էնդել Ստեփանյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>11.08.09թ.</u> (ամսաթիվ)
<u>Մանուկ Մկրտչյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>11.08.09թ.</u> (ամսաթիվ)
<u>Վահրամ Դազարյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>11.08.09թ.</u> (ամսաթիվ)
<u>Մանվել-Զոն Վարթանյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>11.08.09թ.</u> (ամսաթիվ)

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		11.08.09թ. (ամսաթիվ)
Արթուր Հակոբյան (անուն, ազգանուն)	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		11.08.09թ. (ամսաթիվ)
Տիգրան Գալստյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		11.08.09թ. (ամսաթիվ)
Գարիկ Աղամյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ	արչակազմում՝ Ե (ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Մելիքյան (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		11.08.09թ. (ամսաթիվ)

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ակտիվներ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 28,062,648 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 2,927,093 հազ. ՀՀ դրամով կամ 11.6%-ով, իսկ 31.03.09թ.-ի համեմատ՝ 92,608 հազ. ՀՀ դրամով կամ 0.3%-ով:

2009 թվականի 1-ին եռամսյակի համեմատ հաշվետու եռամսյակի ակտիվների աճի արձանագրված տեմպը պայմանավորված է 2008 թվականից շարունակվող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսությունում գործարար ակտիվության մակարդակի նվազման ազդեցությամբ:

2009 թվականի 2-րդ եռամսյակի ավարտին, նախորդ տարվա 2-րդ եռամսյակի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 4,592,420 հազ. ՀՀ դրամ կամ 97.9%, և հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների՝ 132,842 հազ. ՀՀ դրամ կամ 1.1%, աճով:

2009 թվականի 1-ին եռամսյակի վերջի համեմատ, Բանկի ակտիվների աճը նույնպես հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 2,209,637 հազ. ՀՀ դրամ կամ 31.2%, և հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների՝ 308,161 հազ. ՀՀ դրամ կամ 2.7%, աճով:

Վարկեր

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին վարկային պորտֆելը կազմել է 11,536,607 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 15,781 հազ. դրամով կամ 0.14%-ով, իսկ 31.03.09թ.-ի համեմատ աճել է 55,898 հազ. ՀՀ դրամով կամ 0.49%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2009 թվականի 2-րդ եռամսյակի արդյունքներով տրամադրված վարկերի մնացորդների նվազումը պայմանավորված է միջանկյալ ժամանակահատվածում ճգնաժամի արդյունքում գործարար ակտիվության կտրուկ նվազմամբ և Բանկի կողմից վարվող վարկային քաղաքականության, ինչպես նաև վարկային ռիսկի կառավարման քաղաքականության, վերանայմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրվել է 4,667,309 հազ. ՀՀ դրամի վարկ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում՝ 5,167,628 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր, որը վկայում է վարկային ռիսկի արդյունավետ և էֆֆեկտիվ կառավարման մասին:

Արժեթղթեր

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի ներդրումներն արժեթղթերում (այդ թվում՝ հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր) կազմել են 3,160,055 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1,494,407 հազ. ՀՀ դրամով կամ 32.1%-ով, իսկ 31.03.09թ. համեմատ՝ 1,173,313 հազ. ՀՀ դրամով կամ 27.1%-ով:

Նախորդ ժամանակահատվածների համեմատ, արժեթղթերում կատարված

ներդրումների ծավալների նվազումը պայմանավորված է ֆինանսական շուկայում արձանագրված էական փոփոխությունների պատճառով պետական արժեթղթերի պորտֆելի ծավալների և կառուցվածքի վերանայման շարունակական գործընթացով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 21,935,996 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 15,334,705 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Արտարժույթային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

- ❖ ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 76,405.4 հազ. ԱՄՆ դոլար,
- ❖ ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 238,872.3 հազ. ՌԴ ռուբլի,
- ❖ Եվրո գործարքների ծավալը՝ 45,953 հազ. եվրո:

Վերը նշված արտարժույթային գործառնությունների արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 78,230 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 73,292 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Պարտավորություններ և Կապիտալ

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի պասիվների աճը (2,927,093 հազ. ՀՀ դրամով կամ 11.6%-ով) պայմանավորված է ընդհանուր կապիտալի (2,352,329 հազ. ՀՀ դրամ կամ 44.7%) և պարտավորությունների (574,764 հազ. դրամ կամ 2.9%) աճով:

Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների (224,295 հազ. ՀՀ դրամ կամ 4.8%) և հաճախորդների նկատմամբ պարտավորությունների (503,689 հազ. ՀՀ դրամ կամ 3.5%) աճով:

Հարկ է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 2,127,308 հազ. ՀՀ դրամով կամ 130.1%-ով:

31.03.09թ.-ի համեմատ, Բանկի պասիվներն աճել են 92,608 հազ. ՀՀ դրամով կամ 0.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պարտավորությունների (108,283 հազ. ՀՀ դրամ կամ 0.5%) աճով: Միևնույն ժամանակ, Բանկի ընդհանուր կապիտալը նվազել է 15,675 հազ. ՀՀ դրամով կամ 0.2%-ով:

Ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդները նվազել են 534,464 հազ. ՀՀ դրամով կամ 12.4%-ով՝ կազմելով 3,762,170 հազ. ՀՀ դրամ:

Կապիտալ

Հաշվետու եռամսյակում Բանկի ընդհանուր կապիտալի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պայմանավորված է կանոնադրական կապիտալի, ստացված էմիսիոն եկամտի և չբաշխված շահույթի աճով, ինչպես նաև վերագնահատման պահուստում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքի ներառմամբ:

31.03.09թ. համեմատ, Բանկի ընդհանուր կապիտալի նվազումը պայմանավորված է վերագնահատման պահուստում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքի նվազմամբ:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 1,233 հազ. ՀՀ դրամով կամ 0.2%-ով՝ կազմելով 514,771 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային ներդրումներից ստացված եկամուտներին (458,521 հազ. ՀՀ դրամ կամ 89.1%) և արժեթղթերից ստացված եկամուտներին (45,485 հազ. ՀՀ դրամ կամ 8.8%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից զուտ եկամուտները կազմել են 61,556 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 5,019 հազ. ՀՀ դրամով կամ 8.9%-ով:

Արտարժութային գործառնություններից ստացված զուտ շահույթն աճել է 4,938 հազ. ՀՀ դրամով կամ 6.7%-ով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է հաշվետու եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ	2008թ. 2-րդ եռամսյակի համար	2009թ. 2-րդ եռամսյակի համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	513,538	514,771
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(149,314)	(268,560)
Զուտ տոկոսային եկամուտ	364,224	246,211
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	70,264	80,468
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(13,727)	(18,912)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	56,537	61,556
Արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/ (վնաս)	73,292	78,230
Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)	18,395	(13,126)
Այլ եկամուտ	10,521	12,564
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	(14,210)	12,578
Անձնակազմի գծով ծախսեր	(118,198)	(164,825)
Հիմնական միջոցների մաշվածություն	(29,337)	(38,873)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(1,965)	(1,965)
Այլ ծախսեր	(129,478)	(134,902)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	229,781	57,448
Շահութահարկի գծով ծախս	(41,623)	17
Շահույթ հարկումից հետո	188,158	57,465

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 268,560 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 119,246 հազ. ՀՀ դրամով կամ 79.9%-ով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում հաճախորդների հաշիվների դիմաց վճարված տոկոսային ծախսերին, որոնք կազմել են 154,212 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ,

Բանկի անձնակազմի գծով ծախսերն աճել են 46,627 հազ. ՀՀ դրամով կամ 39.4%-ով՝ կազմելով 164,825 հազ. ՀՀ դրամ, հիմնական միջոցների մաշվածության ծախսերն աճել են 9,536 հազ. ՀՀ դրամով կամ 32.5%-ով՝ կազմելով 38,873 հազ. ՀՀ դրամ, ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը երկու ժամանակահատվածների համար նույնն են և կազմել են 1,965 հազ. ՀՀ դրամ:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկն ստացել է 57,465 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 188,158 հազ. ՀՀ դրամ շահույթի դիմաց:

Նախկինում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքը ներառված է եղել Ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվության համապատասխան տողում: Ներկայումս, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքը հաշվառվում է Ֆինանսական դրության մասին միջանկյալ հաշվետվության Կապիտալի կազմում: Հաշվետու եռամսյակի արդյունքներով, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացվել է 61,024 հազ. ՀՀ դրամի բացասական տարբերություն: Այսինքն, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքը նվազեցնելուց հետո Բանկի զուտ շահույթը կազմեր 118,489 հազ. ՀՀ դրամ:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 0.76%,

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 0.19%:

Հաշվետու եռամսյակի 57,465 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթի հաշվարկով մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել 53.59 դրամ շահույթ մեկ բաժնետոմսին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 243.06 ՀՀ դրամ շահույթի դիմաց:

Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, որն իր արդյունքներով արտացոլվում է կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտներում, կազմել է 10,204 հազ. ՀՀ դրամ կամ 14.5%:

Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների և հեռախոսավարձերի ընդունումը, որը նախորդ տարվա նույն ժամակահատվածի համեմատ, աճել է 365,849 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 472,487 հազ. դրամ:

2009 թվականի հունիսի 30-ի դրությամբ Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 32,364, որը 2008 թ. հունիսի 30-ի համեմատ աճել է 18,788-ով: Բանկի ակտիվ հաճախորդների կազմը և կառուցվածքն արտացոլված են ստորև բերվող աղյուսակում:

Բանկի հաճախորդներ	Հաճախորդների քանակը		
	30.06.08	30.06.09	(+/-)
Իրավաբանական անձինք	537	1,267	730
Ֆիզիկական անձինք	13,039	31,097	18,058
Ընդամենը	13,576	32,364	18,788

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի հաճախորդների 3.9%-ն իրավաբանական, իսկ 96.1%-ը ֆիզիկական անձիք են:

Վճարահաշվարկային գործառնություններ

Չեկեր

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը համագործակցել է American Express ընկերության հետ և տրամադրել է 35 հատ ճանապարհային չեկ:

Ակրեդիտիվներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում Բանկը թողարկել է 232,659 ԱՄՆ դոլար գումարով ակրեդիտիվներ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Բանկը թողարկել էր 14,260 ԱՄՆ դոլար, 512,968.6 Եվրո և 397,497.3 Ռուսաստանյան ռուբլի ընդհանուր գումարով ակրեդիտիվներ, որոնցից 457,528.6 Եվրո տրամադրվել էր EBRD-ի հետ իրականացվող առևտրի խթանման ծրագրի շրջանակներում:

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 2,093,671 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2,641,984 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 3,614 հատով, որից 2,573-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, իսկ 1041-ը՝ MasterCard միջազգային պլաստիկ քարտերին: Հաշվետու եռամսյակի ավարտին պլաստիկ քարտերի քանակը կազմել է 25,675 հատ:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ, ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2008 թվ., 2-րդ եռ.	2009 թվ., 2-րդ եռ.
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	188,158	57,465
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,888,227	7,516,957
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	3.85	0.76
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	188,158	57,465
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	26,622,092	30,586,401
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.71	0.19
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	188,158	57,465
Գործառնական եկամուտ	522,969	385,435
Ջուտ շահույթի մարժա (NPM), %	35.98	14.91
Գործառնական եկամուտ	522,969	385,435
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	26,622,092	30,586,401
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	1.96	1.26
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	26,622,092	30,586,401
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,888,227	7,516,957
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.45	4.07
Ջուտ տոկոսային եկամուտ	364,224	246,211
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	18,264,677	17,594,982
Ջուտ տոկոսային մարժա (NIM), %	1.99	1.40
Տոկոսային եկամուտ	513,538	514,771
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	18,264,677	17,594,982
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	2.81	2.93
Տոկոսային ծախսեր	149,314	268,560
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	12,564,225	19,963,523
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	1.19	1.35

Ձուևտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	188,158	57,465
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. հատ	774	1,072
Ձուևտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS), ՀՀ դրամ	243.06	53.59
Սարեղ, %	1.62	1.58

**Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու
ժամանակաշրջանի համար**

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներով և չափանիշներով և դիտարկվում են հետևյալ ցուցանիշների աճի մակարդակներով.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում՝ հիմնական շեշտադրումը դնելով վարկային ներդրումների աճի վրա,
- Ժամկետային ավանդների մնացորդների և ցպահանջ ավանդների մնացորդների աճի ապահովում,
- Բանկի միջնորդական ծառայությունների ընդլայնման, սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- Բանկի զարգացման ռազմավարության ներքո, ինչպես նաև նոր հաճախորդների ներգրավման և մասնաճյուղային ցանցի ընդլայնման նպատակով, նախատեսվում է ստեղծել նոր մասնաճյուղեր ՀՀ տարածաշրջաններում,
- Եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ,
- վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:

31 հուլիսի 2009թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 329/Ա

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանին տրամադրել 10.10.2007–10.10.2008թ.թ.-ն ընկած ժամանակաշրջանի համար հասանելիք ամենամյա նվազագույն արձակուրդից 15 (տասնհինգ) օր՝ ս.թ.-ի օգոստոսի 03-ից մինչև օգոստոսի 17-ը ներառյալ:
Հինք՝ Ա.Օսիպյանի 31.07.2008թ.-ի դիմումը՝ համապատասխան մակագրությունով:
2. Գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը ս.թ.-ի օգոստոսի 03-ից մինչև օգոստոսի 17-ը ներառյալ դնել գործադիր տնօրենի առաջին տեղակալ՝ Արթուր Հակոբյանի վրա:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գործադիր տնօրեն՝



Ա. Օսիպյան

28 հունիսի 2009թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N318/Ա

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ Գարիկ Ադամյանին տրամադրել 30.01.2008–30.01.2009թ.թ.-ն ընկած ժամանակաշրջանի համար հասանելիք ամենամյա նվազագույն արձակուրդից 17 (տասնյոթ) օր՝ ս.թ. օգոստոսի 03-ից մինչև օգոստոսի 19-ը ներառյալ:
Հիմք՝ Գ.Ադամյանի 27.07 .2009թ.-ի դիմումը՝ համապատասխան մակագրությունով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Դրձադիր տնօրենի ժ/պ՝



Ա.Հակոբյան



Միջանկյալ հաշվետվություն ֆինանսական արդյունքների մասին
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01.04.09թ.-ից - 30.06.09թ. երեք ամիսների համար (չտուգված)	30.06.2009թ.-ին ավարտված վեց ամիսների համար (չտուգված)	01.04.08թ.-ից - 30.06.08թ. երեք ամիսների համար (չտուգված)	30.06.2008թ.-ին ավարտված վեց ամիսների համար (չտուգված)
Տոկոսային և մնանատիպ եկամուտներ	6	514,771	1,025,792	513,538	961,895
Տոկոսային և մնանատիպ ծախսեր	6	(268,560)	(513,892)	(149,314)	(304,244)
Չուտ տոկոսային և մնանատիպ եկամուտ		246,211	511,900	364,224	657,651
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	80,468	152,066	70,264	120,891
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(18,912)	(50,914)	(13,727)	(39,195)
Մտացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ		61,556	101,152	56,537	81,696
Արտարժույթային գործարքներից գուտ շահույթ		78,230	126,978	73,292	170,653
Վաճառքի համար մատչելի ներդրումներից գուտ եկամուտ		(13,126)	4,683	18,395	40,663
Այլ եկամուտներ	8	12,564	27,960	10,521	30,490
Չուտ մասնաճանաչման ակտիվների հմարավոր կորուստների պահուստներին	9	12,578	1,669	(14,210)	(33,284)
Անճնակազմի գծով ծախս	10	(164,825)	(332,437)	(118,198)	(231,670)
Հիմնական միջոցների մաշվածություն	18	(38,873)	(76,507)	(29,337)	(52,580)
Ոչ նյութական ակտիվների մաշվածություն	19	(1,965)	(3,929)	(1,965)	(3,866)
Այլ ծախսեր	11	(134,902)	(311,543)	(129,478)	(239,523)
Շահույթը մինչև հարկումը		57,448	49,926	229,781	420,230
Շահութահարկի գծով ծախս	12	17	(6,464)	(41,623)	(53,527)
Շահույթը հարկումից հետո		57,465	43,462	188,158	366,703
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		0.05	0.04	0.23	0.46

Ընկերության նախագահ


 Ա.ՕՍԻՊՅԱՆ


 Յ.ԳՄԻՍՅԱՆ



Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.2009թ.

Միջանկյալ հաշվետվությունն ֆինանսական դրության մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	30.06.2009թ.-ի դրությամբ (չստուգված)	31.12.2008թ.-ի դրությամբ (ստուգված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	9,281,277	10,524,093
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	2,397,554	974,768
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	16	11,754,436	12,164,364
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	2,671,422	2,996,407
Հետգնման պայամանգրերով գրավադրված արժեթղթեր	26	488,633	1,591,742
Հիմնական միջոցներ	18	1,150,885	1,181,602
Ոչ նյութական ակտիվներ	19	49,818	53,747
Ընթացիկ հարկի գծով ակտիվ		43,534	-
Հետաձգված հարկային ակտիվներ	12	12,528	4,992
Վաճառքի համար պահվող ակտիվներ	20	46,505	46,505
Այլ ակտիվներ	21	166,056	94,047
Ընդամենը՝ ակտիվներ		28,062,648	29,632,267
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	4,892,969	4,859,672
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	14,984,524	16,601,573
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	400,685	400,789
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	112,348
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	-	-
Այլ պարտավորություններ	25	168,470	113,283
Ընդամենը՝ պարտավորություններ		20,446,648	22,087,665
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	27	5,362,005	5,362,005
Էմիսիոն եկամուտ		766,001	766,001
Գլխավոր պահուստ		300,000	270,000
Այլ պահուստներ		53,668	25,732
Չբաշխված շահույթ (վնաս)		1,134,326	1,120,864
Ընդամենը՝ կապիտալ		7,616,000	7,544,602
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		28,062,648	29,632,267

Բանկի վարչության նախագահ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր տնօրեն Տ.ԳԱԼՍՅԱՆ



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ք.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Խոստիտի ցուցանիշները	Ենթյիտն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատում/միջ պահուստներ*	Դիմնական միջոցների գծով վերագնահատում/միջ պահուստներ*	Զբաղիված շահույթ/վնաս	Ընդամենը
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)							
<i>1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2008թ. (ստուգված)</i>	3,640,000	-	250,000	14,964	-	559,992	4,464,956
2. Վերահաշվարկված մնացորդը	3,640,000	-	250,000	14,964	-	559,992	4,464,956
3. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝	-	-	-	(35,091)	-	-	(35,091)
3.1 Դիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում	-	-	-	-	-	-	-
3.2 Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատում/միջ աճ կամ նվազում	-	-	-	32,739	-	-	32,739
3.3 Վաճառքի համար մատչելի ներդրումներից աճ կամ նվազում	-	-	-	(67,830)	-	-	(67,830)
4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	381,500	-	-	-	-	-	381,500
4.1 Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	381,500	-	-	-	-	-	381,500
5. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	-	366,703	366,703
6. Բաշխված շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-
7. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	68,670	-	-	-	-	68,670
8. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	20,000	-	-	(20,000)	-
8.1 Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	20,000	-	-	(20,000)	-
<i>9. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիսի 2008թ. (չստուգված)</i>	4,021,500	68,670	270,000	(20,127)	-	906,695	5,246,738

Հաշվետու ժամանակաշրջան (II արդյուսակ)							
1. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2009թ. (ստուգված)	5,362,005	766,001	270,000	25,732	-	1,120,864	7,544,602
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-	-
10. Վերահաշվարկված մնացորդը	5,362,005	766,001	270,000	25,732	-	1,120,864	7,544,602
11. Ուղղակիորեն սեփական կապիտալում ծանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝	-	-	-	27,936	-	-	27,936
11.1 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում	-	-	-	-	-	-	-
11.2. Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատումից աճ կամ նվազում	-	-	-	27,936	-	-	27,936
12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնենասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	-	-	-	-	-	-
13. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	-	-	-	-	-	43,462	43,462
14. Բաշխված շահութաբաժիններ	-	-	-	-	-	-	-
15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	-	-	-	-	-	-	-
16. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	30,000	-	-	(30,000)	-
16.1. Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	30,000	-	-	(30,000)	-
17. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30 հունիսի 2009թ. (չստուգված)	5,362,005	766,001	300,000	53,668	-	1,134,326	7,616,000

Բանկի վարչության նախագահ

Լ.ՕՍԻՊՅԱՆ

ԿՏ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.2009թ.

Գլխավոր մուշտակագր

Տ.ԳԱԼՍՅԱՆ



Միջանկյալ հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զ.Երևան, Պուշկինի 19

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄ	Ծանոթագրություն	30.06.2009թ-ին ավարտված վեց ամիսների համար (չստուգված)	30.06.2008թ-ին ավարտված վեց ամիսների համար (չստուգված)
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Ստացված տոկոսներ		1,027,805	839,485
Վճարված տոկոսներ		-457,868	-335,163
Ստացված կոմիսիոն գումարներ		152,066	120,891
Վճարված կոմիսիոն գումարներ		-50,914	-39,195
Վաճառքի համար մատչելի արժեթղթերից օգուտ		4,684	7,453
Արտարժույթային գործառնություններից իրացված շահույթ		126,978	170,653
Այլ ստացված եկամուտներ		50,529	199,610
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		5,780	6,248
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		-261,559	-180,633
Վճարված այլ գործառնական ծախսեր		-392,557	-415,429
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		204,944	373,920
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)			
Դեպոնացված միջոցներ 37 ԿԲ-ում		210,342	60,649
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		-1,486,812	1,255,228
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ		815,737	-1,983,169
Այլ ակտիվներ		-60,905	247,218
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		-1,312,795	1,415,585
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		-3,315,063	-2,785,802
Այլ պարտավորություններ		-420,476	-366,637
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		-5,365,028	-1,783,008
Վճարված շահութահարկ		-57,990	-41,570
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		-5,423,018	-1,824,578
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Ներդրումային արժեթղթերի առք/վաճառք և իրացում		1,454,904	2,211,017
Հիմնական միջոցների առք		-45,794	-885,404
Հիմնական միջոցների վաճառք		-	47,725
Ոչ նյութական ակտիվների առք ու վաճառք		-	-20,576
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		-	-
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		1,409,110	1,352,762
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		-	450,170
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		-	150,000
Բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		1,076,452	1,091,199
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		-	-
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		1,076,452	1,691,369
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		-2,937,456	1,219,553
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		11,039,386	4,860,663
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց		1,627,607	3,891
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ		9,729,537	6,084,107

Բանկի վարչության նախագահ  Ա.ՕՍԻՊՅԱՆ

ԿՏ  Գլխավոր հաշվապահ  Տ.ԳԱԼՍՅԱՆ